ներ: Բացառիկ ու հետաքրքիր էին նաև նախշազարդ ու լաքապատ ձվաձև փայտերը: Երեկոյին, որ սովորականից ավելի բազմամարդ էր, ելույթ ունեցան Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, «Կովկասյան տան» տնօրեն Նաիրա Գելաշվիլին, Վրաստանի հայերի միության փոխնախագահ, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը, վիրահայ բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, Վրաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանի խորհրդական Նիկոլայ Կորչմարը և այլք: Բանախոսները կարևորեցին նման աշխատանքները, քանի որ ինքնադրոշմ ու շեշտված անհատականությամբ մոտեցող արվեստագետի հզոր հավատքից ու զորեղ աղոթքից ծնված ճշմարիտ արվեստում գտնում ես սփոփանք, մխիթարություն, բյուրեղանում ես... իսկ դա հաճախ խորտակում է ամեն մի թշնամություն, չարիք...

Նշենք, որ աստվածահաճո այս նախաձեռնությունը թվով երրորդն է (նախորդ երկու միջոցառումներին ցուցադրվել էին վիրահայ լուսանկարիչների և Ռոբերտ Ներսեսովի գեղարվեստից ստուդիայի սաների ստեղծագործությունները) արգասաբեր այն համագործակցության, որը ձևավորվել է Կովկասյան տան ու Վիրահայոց թեմի միջև:

ՄԻՋԻՆՔԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Մարտի 14-ին առանձնապես բազմամարդ էր Վիրահայոց թեմի Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցին, ուր աննախադեպ հանդիսավորությամբ ու խանդավառությամբ նշվում էր Միջինքը:

Երեկոյան կատարվեցին «Խաղաղական» և «Հանգստյան» ժամերգությունները, որոնց ընթացքում թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն իր օրհնությունը բերեց հավատացյալներին և ներկայացրեց օրվա արարողությունների ու Միջինքի խորհրդի բացատրությունը: Հավարտ ժամերգությունների կատարվեց, թեմի առաջնորդարանի Մշակույթի բաժնի նախաձեռնությամբ պատրաստված, Միջինքի գաթաների օրհնությունն ու բաշխումը հավատացյալներին: Ժողովրդական ընդունված սովորույթի համաձայն, գաթաներում տեղադրվել էին երջանկաբերության խորհուրդն արտահայտող արծաթյա փոքրիկ զարդեր, որոնց վրա թբիլիսցի ճանաչված լուսանկարիչ և քանդակագործ Սարգիս Դարչինյանի կողմից փորագրվել էին «Միջինք» և «Վիրահայոց թեմ-2007» բառերը:

Առաջնորդարանի հոգածությամբ, Միջինքի ուրախ երեկոն իր շարունակությունը գտավ Գարրի և Ժաննա Դավթյանների տիկնիկային թատրոնում: Թբիլիսիի Հավլաբար թաղամասում գտնվող թանգարանատիպ այս տունն ու խամաճիկների միջոցով բարին սերմանող հայկական այս հյուրընկալ ընտանիքը մեծ համբավ ունի ոչ միայն հայ, այլև վրաց հասարակայնության շրջանում: Այս անգամ էլ, հաստատված ավանդույթի համաձայն, խամաճիկներն իրենց ուրախ ու իքնատիպ ներ-

կայացումով լուսավոր ու գեղեցիկ զգացումներ արթնացրեցին ներկաների հոգում: Ու այդ բարի տրամադրություններով էլ ոգեշնչված, ցուցադրությանը հաջորդած Պահոց ընթրիքի շուրջ, ներկաները խոսեցին համայնքն է'լ ավելի աշխուժացնելու, այն կուռ դարձնելու ուղիների շուրջ: Նրանք գոհունակություն հայտնեցին և ողջունեցին եկեղեցու հոգևոր սպասավորների և թեմի Մշակույթի բաժնի կողմից կազմակերպվող այսօրինակ միջոցառումները, որոնք, քրիստոնեական ու ազգային բնույթ կրելուց բացի, մեծապես նպաստում են վիրահայ համայնքային կառույցների համախմբմանն ու միասնականությանը: Ջերմ ու մտերմիկ զրույցը ժամանակ առ ժամանակ ընդմիջվում էր վիրահայ մտավորականների կատարմամբ հնչող ազգային երգերով, տեղի ճանաչված մարդկանց մասին հետաքրքիր պատմություններով և ասմունքով, այդ թվում՝ հեղինակային ստեղծագործություններից:

Միջինքի երեկոյին մասնակցելու նպատակով այս անգամ հրավիրվել էին «Վրաստան» հայալեզու շաբաթաթերթի, հայկական «Մթավարի» հեռուստահաղորդումների և Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամները, այստեղ էին նաև տեղի հոգևոր դասը, առաջնորդարանին կից Մշակույթի հարցերով հանձնախմբի անդամները, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Վրաստանի հայ խորհրդարանականներ Համլետ Մովսիսյանը և Վան Բայբուրթյանը:

ԴԻՎԱՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ